«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՈՐԱԿԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌՑԱՆՑ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

03.02.2022թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջում իրականացվող հիմնարար բարեփոխումների շրջանակում իրականացվել են համալիր միջոցառումներ:

Կատարված աշխատանքների ընթացքը և արդյունավետությունը գնահատելու նպատակով, գործող «Ներքին և արտաքին շահակիցների հետադարձ կապի ապահովման քաղաքականության» համաձայն, ՈԱ պատասխանատուն իրականացրել է առցանց հարցումներ ուսանողների շրջանում:

1. **Հետազոտության նպատակը:** Ուսումնասիրել և վերլուծել Քոլեջում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուժեղ և թույլ կողմերը:
2. **Հետազոտության խնդիրները՝**

- ❖ Բացահայտել ուսանողների շրջանում դասավանդման որակի արդյունավետության մակարդակը:
- ❖ Ստեղծել տվյալների հենք դասախոսական կազմի գործունեության գնահատման համար:
- ❖ Հարցումների արդյունքների հիման վրա բացահայտել խնդիրները և գտնել դրանց լուծման ուղիները:

3. **Ուսանողների հարցման գործընթացի կազմակերպումը**

ՈԱ պատասխանատուի կողմից, համաձայն գործող կարգի՝ 24.01.2022-28.02.2022 թթ. կազմակերպվել է առցանց հարցումներ: Քոլեջի միջնակարգ և հիմնական կրթության հիմքով կրթական ծրագրով սովորող թվով 125 ուսանողներից հարցմանը մասնակցել են 65 ուսանող, այսինքն ուսանողների ընդհանուր թվի մոտ 52 %-ը մասնակցել են հարցմանը և պատասխանել հարցաթերթիկում ներառված հարցերին (Հավելված 1):

Հարցաթերթը պարունակում է 13 հարց:

4. **Հետազոտության ընտրանքի նկարագրություն**

Ուսանողների առցանց հարցումներն անցկացվել են **Google Forms** ծրագրով՝ երկու կրթական ծրագրով սովորող ուսանողների շրջանում:

Ուսանողների ակտիվ մասնակցությունն ապահովվել է Ուսանողական խորհուրդը՝ տարածելով հղումը նրանց ֆեյսբուքյան անձնական էջերում, հորդորելով մասնակցել և պատասխանել անաչառ և օբյեկտիվ:

5.Հարցման արդյունքների ամփոփում

Հարցումների արդյունքներն ամփոփվել են ՈԱ պատասխանատուի կողմից, ներկայացվել տնօրենի տեղակալին և ամբիոններին, ապա նաև զեկուցվել Քոլեջի Տնօրինական խորհրդի նիստին:

Հավելված 1

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. Նշեք Ձեր մասնագիտությունը

Գծանկար № 1



Մեր կողմից կազմակերպած հարցմանը ընդհանուր առմամբ մասնակցել են Քոլեջում սովորողների 52%-ը: Մասնակիցներից մեծամասնությունը 65%-ը «Դեղագործություն» մասնագետներն են, «Ատամնատեխնիկական գործ» մասնագետները 30%-ը, ամենա քիչ մասնակցությունը «Քույրական գործ» մասնագետների մոտ էր, ընդամենը 5%:

Ասպիսով, Քոլեջում առավել ակտիվ են «Դեղագործություն» մասնագիտությամբ սովորողները:

2. Գնահատեք Ձեր դասախոսի մասնագիտական կարողությունները տեսական դասընթացների ժամանակ

Գծանկար № 2

Տվյալները ներկայացված են մասնակիցների թվերով



Գծանկար № 2.1



2-րդ հարցի վերաբերյալ պատասխանների վերլուծությունը հնարավորություն է տալիս փաստել այն, որ անհրաժեշտ է իրականացնել համալիր միջոցառումներ, մասնավորապես. կազմակերպել վերապատրաստումներ դասախոսների համար, կոնկրետ թեմատիկաներով, բարելավել քոլեջում տեխնկական միջոցները:

3. Գնահատեք Ձեր դասախոսի մասնագիտական կարողությունները գործնական դասընթացների ժամանակ

Գծանկար № 3

Տվյալները ներկայացված են մասնակիցների թվերով



«Գնահատեք դասախոսի մասնագիտական կարողությունները գործնական դասընթացների ժամանակ» հարցին հարցվողները տվել են տարատեսակ գնահատականներ: Ընդհանուր 9-ը հարցերից, առավել մտահոգիչ են՝ «Ստեղծում է

մրցակցային միջավայր», որտեղ ընդամենը 10 հարցվող նշել է «այո» տարբերակը, ևս 10 հարցվող «ոչ» տարբերակը:

«Կիրառում է ուսանողակենտրոն մեթոդներ ու մոտեցումներ (համագործակցային/ ինտերակտիվ, թիմային, անհատական և այլն)» հարցին 18 հարցվող նշել է «այո» տարբերակը, իսկ 10 հարցվող «ոչ» տարբերակը:

«Կիրառում է դասավանդման նորարարական մեթոդներ, հնարքներ» հարցին 19 հարցվող նշել է «այո» տարբերակը, իսկ 6 հարցվող «ոչ» տարբերակը:

«Դասի սկզբում հստակեցնում է գործնական/լաբորատոր պարապմունքի նյութը» հարցին ընդամենը 25 հարցվող է նշել «այո» տարբերակը:

Նման արդյունքները մտահոգիչ են այնքանով, որ ահնրաժեշտ է կազմակերպել սեմինարներ դասախոսական անձնակազմի համար:

4. Գնահատեք Քոլեջի ամբիոնների գործունեությունը

Գծանկար № 4

Տվյալները ներկայացված են մասնակիցների թվերով



Քոլեջի ամբիոնների գործունեության գնահատման վերաբերյալ հարցվողների շրջանում ամենա ցածր միավորը ստացել է Անյուտա Գրիգորյանի ղեկավարած ամբիոնը՝ «4» միավոր 4 հարցվող, «3» միավոր 2 հարցվող, իսկ «5» միավոր գնահատել են ընդամենը 7 հարցվող:

Դեղագիտական առարկաների ամբիոնը լինելով մասնագիտական ԿԾ իրականացնող ամբիոն ստացել է նաև «2» միավոր 6 հարցվողի կողմից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարցման մասնակիցների 65%-ը հենց դեղագործություն մասնագիտության ուսանողներ էին (33 ուսանող), նշանակում է մոտ 20%-ը գնահատել է 2: Այս հանգամանքը մտահոգիչ է այնքանով, որ ամբիոնը անհապաղ պետք է միջոցներ ձեռնարկի բարելավելու ամբիոնի գործունեությունը:

5. Ի՞նչ կցանկանայիք, որ փոխվեր դասավանդման գործընթացում (բաց հարց)

№	Տարբերակ	Պատասխան
1	Ժամանակակից նյութեր կամ գոնե գրականությունություն	33
2	Գնահատման կարգը	28
3	Լաբորատորիայի մեծացում	19
4	Կամպյուտերային սենյակ և լավ ինտերնետ	39
5	Դասերի կազմակերպումը խաղային ձևով	43

6. **Տեղեկացված եք Քոլեջում, ամբիոնում խորհրդատվական ծառայությունների մասին:**

Գծանկար № 6



Հարցվողների գերակշիռ մասը 65%-ը նշել է, որ տեղեկացված են Քոլեջում և ամբիոնում խորհրդատվական ծառայությունների տրամադրման մասին: 25%-ը մասամբ է տեղեկացված, իսկ 10%-ը նշել է ոչ տարբերակը: Այսինքն, քոլեջը և ամբիոնները պետք է մեծ ուշադրություն դարձնեն, իրենց կողմից խորհրդատվական ծառայությունների վերաբերյալ ամբողջ ուսանողական կազմին իրազեկելու աշխատանքներին:

7. **Եթե տեղեկացված եք, նշեք ինչ տեսակի կամ կարգի լրացուցիչ խորհրդատվություն եք ստացել**

Գծանկար № 7



Ինչպես երևում է գծանկար 7-ում, հարցվողների բացարձակ մեծամասնությունը 78.9%-ը դիմել է «Մասնագիտական կողմնորոշման հարցերով», իսկ «Քննություններից կամ ստուրգաքներից առաջ տրամադրվող» և «Կրթական հարցերով» խորհրդատվության համար՝ 50%-ից ավելին: Այսինքն, հարցվողների կեսից ավելին պահում է հետադարձ կապը ամբիոնների և Քոլեջի ուսումնական մասի հետ: Ներկայացված արդյունքները գոհացուցիչ են, այնքանով, որ Քոլեջում գործում է խորհրդատվական արդյունավետ ծառայության մատուցման համակարգը: «Սոցիալական հարցերով» խորհրդատվության համար հարցվողների ընդամնեը 26.3%-ն է օգտվել: Այս ցուցանիշը կարող է ենթադրել, որ հարցվողների 26.3%-ի մոտ առկա են տարբեր սոցիալական խնդիրներ և Քոլեջի ղեկավարությունը, հատկապես մասնագիտական ամբիոնները պետք է մեծ ուշադրություն դարձնեն տարատեսակ սոցիալական միջոցառումների ակտիվացման ուղղությամբ:

8. **Գնահատեք ինչքանով եք բավարարված Քոլեջում խորհրդատվական ծառայություններից:**

Գծանկար № 8



Հաջորդ հարցադրումը նպատակաուղված էր պարզելու հարցվողների բավարարվածության մակարդակը Քոլեջում խորհրդատվական ծառայություններից: Ինչպես երևում է գծանկար 8-ում, գերակշիռ մասը՝ 68%-ը գնահատել է «5» միավոր, 16%-ը՝ «4» և «3» միավոր: Այսինքն, կարելի է հետևություն անել, որ Քոլեջում մատուցվող խորհրդատվական ծառայությունները գերազանց են, սակայն անհրաժեշտ է բարձրացնել նաև 36%-ի մոտ, որպեսզի մոտ ապագայում ունենանք առնվազն 90% գերազանց արդյունք:

9. **Տեղյակ եք Քոլեջի կողմից կարիերային նպաստող ծառայությունների վերաբերյալ ընթացակարգերին:**

Գծանկար № 9



Քոլեջում կարիերային նպաստող ծառայությունների վերաբերյալ ընթացակարգերի վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը կազմում է 75%: Հարցման արդյունքներից պարզվում է, որ միայն 25%-ն է մասամբ տեղեկացված:

10. **Եթե տեղյակ եք, ապա գնահատեք ինչքանով է այն արդյունավետ:**

Գծանկար № 10



Քոլեջում կարիերային նպաստող ծառայությունների վերաբերյալ ընթացակարգերի արդյունավետության վերաբերյալ կարծիքները շատ տարբեր են: Հարցվողների 65%-ը գնահատել է «5» միավոր, 20%-ը՝ «4» միավոր, 10%-ը՝ «3» միավոր, իսկ 5%-ը գնահատել է «2» միավոր: Այս 10% և 5% հարցվողների հետ անհրաժեշտ է աշխատանքներ տանել, բարձրացնելու նրանց մոտ վստահության մակարդակը:

11. Տեղյակ եք Քոլեջում ուսումնառողների իրավունքները արտացոլող փաստաթղթերից:

Գծանկար № 11



Քոլեջում ուսումնառողների իրավունքները արտացոլող փաստաթղթերի վերաբերյալ տեղեկացվածության տվյալները այդքան էլ գոհացուցիչ չեն: Հարցվողների միայն 16.2%-ն է տեղյակ Քոլեջում գործող «Ուսանողի ուղեցույցի» գոյության մասին, որը շատ ցածր ցուցանիշ է: «Գիտելիքների ստուգման, գահատման և բողոքարկման» կարգի վերաբերյալ, տեղյակ են միայն 18.9%-ը, որը ևս գոհացուցիչ չէ: «Քոլեջի ներքին կարգապահական կանոնների» վերաբերյալ տեղյակ են հարցվողների ընդամենը՝ 21.6%-ը: Վերլուծելով հարցման արդյունքները, անհրաժեշտ է ուսանողական խորհրդի հետ միասին կազմակերպել հանդիպումներ ուսանողական համակազմի հետ և հանգամանորեն ներկայացնել վերոհիշյալ փաստաթղթերը:

12. Եթե տղյակ եք, ապա գնահատեք վերոնշյալ փաստթղթերի արդյունավեությունը

Գծանկար № 12



Քոլեջում ուսումնառողների իրավունքները արտացոլող փաստաթղթերի գործունեության արդյունավետությունը, ըստ հարցվողների գնահատվել են երեք ցուցանիշներով, 65%-ը՝ «5» միավոր, 24%-ը՝ «4» միավոր, իսկ 11%-ը գնահատել է «2»

միավոր: Եթե հաշվի առնենք այն, որ հարցվողների կեսից ավելին գնահատել է գերազանց՝ 65%-ը, ապա կարելի է փաստել, որ այդ փաստաթղթերը արդյունավետ են աշխատում: Սակայն հարցվողների 11%-ը գնահատել է «2» միավոր, որը մտորելու տեղիք է տալիս և անհապաղ անհրաժեշտ է այդ ցուցանիշը պետք է սեղմ ժամկետներում (չեզոքացնել) զրեցացնել:

13. Քոլեջում գործող գնահատման համակարգը որքանով է արդյունավետ և թափանցիկ

Գծանկար № 13



Քոլեջում գործող գնահատման համակարգը որքանով է արդյունավետ և թափանցիկ հարցին, հարցվողների կողմից տրվել են չորս տարբեր կարծիքներ: Հարցվողների միայն 55%-ը գնահատել է «5» միավոր, 35%-ը՝ «3» միավոր, իսկ հարցվողների 5-ական տոկոսը գնահատել է «4» և «2» միավոր: Այստեղ ևս ուսումնական մասի կողմից ահնհապաղ պետք կազմակերպել համալիր միջոցառումներ, ուսանողների մոտ կարծիքը փոխելու ուղղությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով կատարված հարցման արդյունքները, կարելի է եզրահանգել, որ Քոլեջում ընդհանուր ուսումնառուղների կողմից դասավանդման որակի ապահովման գործընթացները իրականացնում են բաց, թափանցիկ և արդյունավետ: Առկա պատասխանները, չեն կարող բացասական անդրադառնալ Քոլեջի կողմից մատուցված ծառայությունների որակի վրա, ինչ վերաբերվում է բարելավման միջոցառումներին և կոնկրետ աշխատանքներին, ապա այդ հարցերը Տնօրինական խորհրդում քննարկվելուց հետո, կտերվեն անհրաժեշտ հանձնարարականներ և կկայացվեն համապատասխան որոշումներ:

ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմք ընդունելով հարցման արդյունքների վերլուծությունը և ուղղորդվելով Քոլեջում կիրառվող ՊԻՍԲ շրջափուլի դրույթները, Քոլեջի 2019-2024թթ. Ռազմավարական զարգացման ծրագրի գործողությունների պլան-ժամանակացույցով պայմանավորված, պալանավորվել են համապատասխան գործողություններ:

Կատարված աշխատանքների արդյունավետությունը հարցման միջոցով ստուգվել և/կամ գնահատվել է: Գնահատման տվյալները քննարկվել են՝ Մանկավարժական խորհրդի նիստում, կայացվել է համապատասխան որոշում, որից հետո հարցը լսվել է Տնօրինական խորհրդում: Համաձայն Քոլեջի կանոնադրության, վերջնական որոշումը կայացվելու է Ընդհանուր ժողովը:

Հաշվի առնելով այս ամենը որպես բարելավում առաջարկվում է.

1. Հնձնարարել պրակտիկայի և կարիերայի բաժնի պատասխանատունին բարելավել կարիերային նպաստող ընթացակարգերի վերաբերյալ տեղեկացվածության աշխատանքները:
2. Հանձնարարել ՈԱ պատասխանատուին և Ուսանողական խորհրդին համատեղ կազմակերպել հանդիպումներ ուսանողական համակազմի հետ և հանգամանորեն ներկայացնել՝ «Ուսանողի ուղեցույցը», «Գիտելիքների ստուգման, գահատման և բողոքարկման» կարգը և «Քոլեջի ներքին կարգապահական կանոնները»:
3. Բարելավել մասնագիտական կաբինետները և լաբորատորիաները (ատամնատեխնիկական, դեղագործական և քույրական):
4. Կազմակերպել հանդիպում-քննարկումներ դասախոսների և ուսանողների հետ:
5. Վերանայել Քոլեջի վերաբերյալ տեղեկատվության տարածման մեխանիզմները:
6. Ակտիվացնել ուսանող-դասախոս փոխհարաբերությունները, այն դարձնելով ավելի արդյունավետ:
7. Դասավանդման մեթոդաբանության արդիականացում, ավելի շատ ցուցադրական նյութեր, ուսանողների կողմից ինքնուրույն աշխատանքների ավելացում և այլն:
8. Ուսանողական խորհրդին և մասնագիտական ամբիոններին հանձնարարել ամիսը առնվազն մեկ անգամ կազմակերպել հանդիպումներ ուսանողների հետ, տեղեկացնելով խորհրդատվական ծառայություններից:
9. Կառավարման մարմիններում ներգրավված ուսանողներին հանձնարարել ավելի ակտիվ գործունեություն իրականացնել:
10. Հանձնարարել մանկավարժական խորհրդին ներկայացնել առաջարկություններ դիտարժան և արդիական միջոցառումների ծրագրերի վերաբերյալ:

ՈԱ պատասխանատու՝ _____ Ա.Գ.Գյոզալյան

26.01.2022թ.